# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 13 | Շապիկ սև ամառային: Սև կիսաբամբակյա, ուսադիրներով (ուսադիրների երկարությունը՝ 100մմ, լայնությունը՝ 45մմ, օղակաձև 60 մմ երկարությամբ, 50 մմ լայնությամբ՝ մուգ կապույտ գործվածքով ուսադիր վրադիրով) և ծալովի օձիքով (Polo), 65% բամբակ, 35% պոլիէսթեր, քաշը 1մ/2 – 200-220գ: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի տակ դրվող: Առջևից 3 կոճակով կոճկվող բացվածք: Թևքերի երկարությունը մինչև արմունկները: Ուսային մասերը մշակված գունաքողարկված կտորով (կտորը համաձայնացնել պատվիրատուի հետ): Առջևի ձախ կրծքամասում ներկարված գրպան՝ պլաստմասե շղթայով: Գրպանի վերևի մասում 2 սմ բարձրության վրա կարվում է 5 սմ լայնությամբ և 7 սմ երկարությամբ օվալաձև կպչունակ՝ կրծքանշանի համար: Թիկունքի վերևի մասում կարվում է 8 սմ լայնությամբ և 29 սմ երկարությամբ՝ մուգ կապույտ կամ սև երանգի կտորի վրա ասեղնագործված «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ/ԶՈՐՔԵՐ», իսկ աջ կրծքամասում 3 սմ լայնությամբ և 13 սմ երկարությամբ՝ մուգ կապույտ երանգի կտորի վրա ասեղնագործված «POLICE» մակագրությամբ բառերը, մակագրությունների գործվածքների կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փակ եզրակարով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, իսկ աջ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի թևքանշան: Թևքանշանները ասեղնագործված՝ միաձույլ, կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փակ եզրակարով: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով կամ պոլիէթիլենային |

| | |
|---|---|
| | թափանցիկ պարկերով, արկղերի (պարկերի) մեջ մինչև 20 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1հատ: Արկղերը` պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը : Մատակարար կազմակերպությունը յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս - հասակային սանդղակը. 44/2 – 62/6 քանակները` ըստ պատվիրատուի պահանջի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 13 | |